ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Նկարում պատկերված է.**

1) ճնշաչափ
2) տեղումնաչափ
3) ձայնախորաչափ
4) խոնավաչափ

2 **Որքա՞ն է երկու կետերի միջև իրական հեռավորությունը, եթե նրանք միևնույն միջօրեականի վրա են և միմյանցից հեռացված են 178^0.**

1) 19758 կմ
2) 3663 կմ
3) 10440 կմ
4) 20202 կմ

3 **Երկու կետերի հեռավորությունը գլոբուսի վրա 7,6 սմ է, իսկ իրականում՝ 2280 կմ: Ի՞նչ մասշտաբ ունի գլոբուսը.**

1) 1 : 300 000
2) 1 : 30 000 000
3) 1 : 3 000 000
4) 1 : 30 000

4 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հասարակածային շառավիղը բևեռայինից երկար է:
2) Սկզբնական միջօրեականը ամենաերկար միջօրեականն է:
3) Հասարակածն ամենակարճ զուգահեռականն է:
4) Երկրագունդը պտտվում է Լուսնի շուրջը:

5 **Ի՞նչն է բնորոշ տայգային.**

1) անբավարար խոնավությունը
2) գորշ անտառային հողերը
3) պոդզոլային հողերը
4) լայնատերև ծառերը

6 Պարբերաբար տաք ջուր և գոլորշի շատրվանող աղբյուրը կոչվում է.

1) լավա
2) գեյզեր
3) ցունամի
4) մագմա

7 Միատեսակ ջերմության և խոնավության հատկանիշներով օժտված ներքնոլորտի մեծածավալ օդը, որը ձևավորվում է միասեռ ընդարձակ տարածքի վրա, կոչվում է.

1) մթնոլորտային ճնշում
2) մթնոլորտ
3) օդային զանգված
4) վերնոլորտ

8 Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ ս. ս. է, իսկ գագաթին՝ 440 մմ ս. ս.: Լեռան հարաբերական բարձրությունը կլինի.

1) 2400 մ
2) 1020 մ
3) 1400 մ
4) 1120 մ

9 Նկարում պատկերված է.

1) երկաթուղի
2) նավթամուղ
3) գազամուղ
4) խճուղի



10 Ո՞ր քամիներն են պատկերված նկարում.

1) պասսատներ
2) մուսսոններ
3) լեռնահովտային
4) բրիզներ

11 **Ո՞ր թերակղզիներն են բարեխառն գոտում.**

1) Թայմիր և Չուկոտյան
2) Ալյասկա և Կամչատկա
3) Քեյփ Յորք և Առնեմլենդ
4) Կալիֆոռնիա և Ֆլորիդա

12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մեծ Ավստրալական և Կարպենտարիա ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին:
2) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:
3) Աշխարհում մակընթացության ամենաբարձր ալիքը գրանցվել է Հուդզոնի ծոցում:
4) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:

13 **Բնութագրումով որոշել նեղուցը.**

Այդ նեղուցը միացնում է երկու օվկիանոս և անջատում է Հրոս երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է.

1) Կուկի
2) Թորեսի
3) Մագելանի
4) Բերինգի

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:
2) Կուր–Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:
3) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:
4) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հասարակածային մուսսոնների տեսքով պասսատները, թափանցելով Հյուսիսային Ավստրալիա, առաջացնում են առատ տեղումներ:
2) Անտարկտիդայում տարվա մեծ մասն անհողմ եղանակներ են, որը նպաստում է արեգակնային ջերմության գրեթե 90 %–ի կլանմանը սառցածածկ մակերևույթի կողմից:
3) Չնայած հյուսիսից հարավ մեծ ձգվածությանը՝ Հյուսիսային Ամերիկայում ձևավորվել է կլիմայական չորս գոտի:
4) Հարավային Ամերիկայի արևելյան ափամերձ Ֆոլկլենդյան տաք հոսանքի ազդեցությամբ Պատագոնիայի կլիման բարեխառն ծովային է:

16 **Ո՞ր ծովային հոսանքներն են ազդում Եվրասիայի կլիմայի ձևավորման վրա.**

1) Գվիանական և Գոլֆստրիմ
2) Հյուսիսատլանտյան և Մուսսոնային
3) Բրազիլական և Պերուական
4) Գվինեական և Բենգելյան

17 **Ո՞ր կղզու (կղզիների) ափերի մոտով է անցնում օվկիանոսային տաք հոսանք.**

1) Մեծ Բրիտանիա
2) Ֆոլկլենդյան
3) Կուրիլյան
4) Կանարյան

18 **Անապատների ո՞ր զույգն է հարավային կիսագնդի արևադարձային կլիմայական գոտու սահմաններում.**

1) Կարակում և Ավազային մեծ
2) Ռուբ էլ Խալի և Լիբիական
3) Կալահարի և Ատակամա
4) Սահարա և Թար

19 Ո՞ր լիճն է քարտեզում նշված Դ տառով.

1) Նյասա
2) Ռուդոլֆ
3) Չադ
4) Տանգանիկա



20 Ո՞ր նավահանգիստն է քարտեզում նշված Ը տառով.

1) Տրիպոլի
2) Ալեքսանդրիա
3) Քեյփթաուն
4) Ալժիր

21 **Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկրներում բարձր բնական աճը պայմանավորված չէ.**

1) կանանց տնտեսության մեջ ներգրավվածության ցածր աստիճանով
2) վաղ ամուսնություններով
3) գյուղական բնակչության գերակշռությամբ
4) կրթական բարձր մակարդակով

22 **Ռուսաստանի բնակչության սեռային կազմում մեծ է կանանց բաժինը: Ինչո՞վ է պայմանավորված Սիբիրում և Ուրալում տղամարդկանց համեմատաբար մեծ բաժինը.**

1) Երկրորդ աշխարհամարտի հետևանքներով
2) տնտեսական մասնագիտացման բնույթով
3) ծնելիության մակարդակով
4) կյանքի միջին տևողությամբ

23 **Բնութագրումով որոշել տարածաշրջանը.**

Այս տարածաշրջանը համաշխարհային երկու կրոնների՝ քրիստոնեության և մահմեդականության բնօրրանն է: Արդյունաբերության կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը: Տարածաշրջանն աշխարհում առաջինն է փյունիկյան արմավի մշակությամբ: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

1) Կենտրոնական Ասիա
2) Հարավարևմտյան Ասիա
3) Հարավարևելյան Ասիա
4) Հարավային Ասիա

24 **Որքա՞ն է երկրի ուրբանիզացման մակարդակը, եթե նրա բնակչության թիվը 32 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 24 մլն.**

1) 85%
2) 75%
3) 60%
4) 70%

25 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Մարդկանց գրեթե 70 %–ն ապրում է երկրագնդի ցամաքային տարածքի 7%–ի վրա:
2) Բնակչության միջին խտությունը տարածքի բնակեցման աստիճանն արտահայտող ցուցանիշ է:
3) Ճապոնիան, Հարավային Կորեան, Նիդերլանդները բնակչության ցածր խտություն ունեցող երկրներ են:
4) Աշխատանքային ռեսուրսների այն մասը, որը զբաղված է տնտեսության այս կամ այն ոլորտում, կոչվում է տնտեսապես ակտիվ բնակչություն:

26 **Տրված զույգերից որի՞ պետություններն են գտնվում Աֆրիկայում.**

1) Նեպալ և Բութան
2) Եգիպտոս և Եմեն
3) Գանա և Թունիս
4) Հոնդուրաս և Գվատեմալա

27 **«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» զույգերից ընտրել *սխալը*.**

1) պլաստմասսա — մեքենաշինություն
2) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն
3) պողպատ — մետաղաձուլություն
4) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն

28 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ունիտար սահմանադրական միապետություն է:
2) Դաշնային բացարձակ միապետություն է:
3) Ունիտար խորհրդարանական հանրապետություն է:
4) Դաշնային նախագահական հանրապետություն է:

29 **Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներով են խոսում.**

1) պարսիկները և բուլղարները
2) վրացիները և ադրբեջանցիները
3) արաբները և ղազախները
4) էստոնացիները և ֆինները

30 **«Պետություն — խոշորագույն քաղաք» զույգերից ընտրել ճիշտը.**

1) ԱՄՆ — Վաշինգտոն
2) Թուրքիա — Ստամբուլ
3) Բրազիլիա — Բրազիլիա
4) Ավստրալիա — Կանբերա

31 **Ընտրել «մետաղաձուլության ճյուղ — առաջատար երկիր» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. սև մետաղների ձուլում	ա. Ռուսաստան և Կանադա
2. ալյումինի ձուլում	բ. Չինաստան և Ճապոնիա
3. պղնձի ձուլում	գ. Մալայզիա և Բոլիվիա
4. անագի ձուլում	դ. ԱՄՆ և Չիլի

1) 1–բ, 2–ա, 3–դ, 4–գ
2) 1–բ, 2–ա, 3–գ, 4–դ
3) 1–ա, 2–դ, 3–գ, 4–բ
4) 1–ա, 2–բ, 3–դ, 4–գ

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Գերմանիայում մեքենաշինությունը տնտեսության մասնագիտացման ճյուղ է:
2) Հրաբխային շրջաններում կառուցվում են երկրաջերմային էլեկտրակայաններ:
3) Համաշխարհային բեռնափոխադրումներում ամենամեծ բաժինն ունի երկաթուղային տրանսպորտը:
4) Քիմիական արդյունաբերությունն ունի անսպառ հումքային բազա:

33 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հայկական լեռնաշխարհի գետերը հորդանում են առավելապես աշնանը:
2) Վանա լճի կղզիներից նշանավոր է Աղթամարը:
3) Հրաբխային ծագման լճերը շատ են Ախալքալաքի սարահարթում:
4) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:

34 **Արագածոտնի մարզում ոռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել հետևյալ մայր ջրանցքները.**

1) Թալինի և Արզնի–Շամիրամի
2) Նալբանդի և Լոռու
3) Արմավիրի և Շիրակի
4) Ստորին Հրազդանի և Կոտայքի

35 Տրվածներից առավել շատ քաղաքային բնակավայրեր ունեցող մարզն է.

1) Շիրակը
2) Լոռին
3) Գեղարքունիքը
4) Սյունիքը

36 Ո՞ր լեռնաշղթան է քարտեզում նշված *Ա* տառով.

1) Գուգարաց
2) Բազումի
3) Փամբակի
4) Շիրակի



37 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված *Ը* տառով.

1) Սպիտակ
2) Մարալիկ
3) Թալին
4) Աշտարակ

38 **Ո՞ր բնական ռեսուրսն է անսպառ.**

1) հողային
2) անտառային
3) կլիմայական
4) հանքային

39 **Կենդանական ռեսուրսների պահպանմանն ուղղված միջոցառում *չէ*.**

1) «Կարմիր գրքերի» ստեղծումը
2) որսի կարգավորումը
3) մթերատվության բարձրացումը
4) արգելոցների ստեղծումը

40 **Շրջակա միջավայրում՝ օդում, ջրում, հողում կամ սննդամթերքի մեջ վնասակար նյութի այն քանակությունը, որի ազդեցությունը որոշակի ժամանակահատվածում մարդու առողջության կամ սերունդների համար վտանգավոր չէ, կոչվում է.**

1) սմոգ
2) սահմանային թույլատրելի խտություն
3) կանցերոգեն նյութ
4) ջերմոցային էֆեկտ

41 **Գրել այն ժողովուրդների համարները, որոնց թիվն ավելի քան 100 մլն է.**

1) բենգալացիներ
2) գերմանացիներ
3) հինդուստանցիներ
4) իսպանացիներ
5) ֆրանսիացիներ
6) ռուսներ
7) իտալացիներ
8) անգլիացիներ

42 **Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.**

1) Ալավերդի
2) Շամլուղ
3) Կապան
4) Քաջարան
5) Ախթալա
6) Արարատ
7) Ագարակ
8) Սոթք

43 **Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

1) Բենգելյան
2) Կանարյան
3) Օյա Սիո
4) Կալիֆոռնիական
5) Ֆոլկլենդյան
6) Լաբրադորյան
7) Պերուական
8) Սոմալիի

44 **ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել արևոտ օրերի թվի աճման կարգով.**

1) Գյումրի
2) Մարտունի
3) Իջևան

45 **Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան:
2) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում:
3) Աշխարհում արտադրվող մսի 3/5-ը տալիս է խոզաբուծությունը:
4) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը:
5) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը:
6) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն:

Բ մակարդակ

46 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Երկրագունդը միջօրեականներով բաժանված է 15 ժամային գոտիների:
2) Դեկտեմբերի 22–ը ձմեռային գիշերահավասարի օրն է:
3) Լոնդոնը առաջին ժամային գոտում է:
4) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հվ. լ. 23° 30′–ի վրա:

47 **Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը – 12° է, իսկ նույն պահին ստորոտում՝ + 3°: Օդի ճնշումը գագաթին 460 մմ է: Օդի ճնշումը լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել 6°–ով).**

1) 300 մմ
2) 710 մմ
3) 760 մմ
4) 50 մմ

48 **Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:
2) Ցունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
3) Ջրի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Կորալյան ծովում:
4) Խաղաղ օվկիանոսի սառը հոսանքներից են Պերուականը և Օյասիոն:

49 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ավստրալիայի ծայր արևելյան մասում աղեղնաձև ձգվում է արևադարձային խոնավ կլիմայի մարզը:
2) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասը զբաղեցնում է չափավոր ցամաքային կլիմայի մարզը:
3) Հյուսիսային Ամերիկայի հարավային մասում ձևավորվել է մերձարևադարձային խոնավ կլիմայական մարզը:
4) Աֆրիկայի ծայր հյուսիսում է ձգվում մերձարևադարձային միջերկրածովային կլիմայական մարզը:

50 **Ո՞ր զուգորդությունն է ճիշտ.**

1) Հյուսիսային Ամերիկա — տունդրա — էվկալիպտ
2) Աֆրիկա — կամպոս — բառբաբ
3) Հարավային Ամերիկա — սելվաս — հևեա
4) Եվրասիա — պամպա — ֆիկուս

51 **Նախագահական հանրապետություններ են.**

1) Ճապոնիան և Իտալիան
2) Թուրքիան և Իսպանիան
3) Բրազիլիան և ԱՄՆ–ը
4) Հնդկաստանը և Գերմանիան

52 **Անագի ձուլմամբ առաջատար երկրներ են.**

1) Իրանը և Հնդկաստանը
2) Ինդոնեզիան և Մալայզիան
3) Գերմանիան և Ֆրանսիան
4) Ճապոնիան և Չինաստանը

53 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Շաքարեղեգը ջերմասեր բույս է և հիմնականում տարածված է ջերմային տաք գոտում:
2) Միջերկրածովյան երկրները մասնագիտանում են ձիթապտղի մշակությամբ:
3) Վուշը հիմնական թելատու մշակաբույսն է և տարածված է արևադարձային գոտու երկրներում:
4) Շաքարի ճակնդեղի մշակության հիմնական շրջանները բարեխառն գոտում են:

54 **Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Բնակչությունն ունի միատարր ազգային կազմ:
2) Բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեության բողոքական ուղղությունը:
3) Խոշոր քաղաքներից են Թուլուզը և Միլանը:
4) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:

55 **Բնութագրումով որոշել տարածաշրջանը.**

Այս տարածաշրջանի հյուսիսում տարածվում են բարձր լեռներ: Ընդերքը հարուստ է երկաթաքարի, քարածխի, մանգանի, քրոմի պաշարներով: Այստեղ է ծագել համաշխարհային կրոններից ամենաերիտասարդը՝ բուդդայականությունը: Տարածաշրջանն աչքի է ընկնում բնակչության բարձր խտությամբ: Ո՞րն է այդ տարածաշրջանը.

1) Կենտրոնական Ասիան
2) Հարավարևմտյան Ասիան
3) Հարավարևելյան Ասիան
4) Հարավային Ասիան

56 **Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հարավ–արևելքում է Սավալան հրաբխային վիթխարի զանգվածը:
2) Հյուսիսում՝ Սև ծովի ափին զուգահեռ, ավելի քան 500 կմ երկարությամբ ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
3) Հարավային մասում՝ Միջագետքի ցածրադիր հարթավայրի հարևանությամբ, բարձրանում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան:
4) Արևելքից եզրավորվում է Փոքր Կովկասի լեռնային համակարգի լեռներով:

57 **ՀՀ–ում ամենաքիչ տեղումները լինում են.**

1) միջլեռնային գոգավորություններում
2) միջին բարձրության լեռնային գոտիներում
3) բարձրադիր լեռնային գոտում
4) եզրային լեռնաշղթաների հողմահայաց լանջերին

58 **Երկաթուղային հանգույցներ են.**

1) Գյումրին և Հրազդանը
2) Արմավիրը և Արտաշատը
3) Վանաձորը և Սպիտակը
4) Սևանը և Վարդենիսը

59 **Արարատի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Հարուստ չէ օգտակար հանածոների պաշարներով:
2) Բարձր է բնակչության միջին խտության ցուցանիշը:
3) Ամենամեծ քաղաքային բնակավայրը Արարատն է:
4) Տարածքի լեռնային մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի միջին բարձրության լեռները:

60 **Ցեմենտի գործարաններ կան.**

1) Գավառում և Մարտունիում
2) Արարատում և Հրազդանում
3) Երևանում և Աբովյանում
4) Արտաշատում և Արմավիրում

61 **Արևմտյան Եվրոպայի տրված պետությունները դասավորել ըստ արևմուտքից արևելք հաջորդականության.**

1) Ֆրանսիա
2) Ավստրիա
3) Շվեյցարիա
4) Լիխտենշտայն

62 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.**

1) Ճապոնիա
2) Չինաստան
3) Պակիստան
4) Գերմանիա
5) Թուրքիա
6) Հնդկաստան
7) Ինդոնեզիա
8) Իրան

63 **Գրել այն բնակավայրերի համարները, որոնք Գեղարքունիքի մարզում *չեն*.**

1) Դիլիջան
2) Բյուրեղավան
3) Սևան
4) Հրազդան
5) Ճամբարակ
6) Մարտունի
7) Վարդենիս
8) Սոթք

64 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

1) Մեկոնգ
2) Ինդոս
3) Մուրեյ
4) Զամբեզի
5) Նիգեր
6) Օրանժ
7) Տիգրիս
8) Սիրդարյա

(65-66) Նավը հս. լ. 36º30´–ի և արլ. ե. 50º–ի վրա է: Որոշել նրա հեռավորությունը (կմ-ով).

65	Հյուսիսային բևեռային շրջագծից:

66	Հարավային արևադարձից:

(67-68) Երկրի բնակչության թիվը 8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 6‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 18 000 մարդ, արտագաղթը՝ 5 000 մարդ.

67	Որոշել բնակչության մեխանիկական աճը:

68	Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

69 **Օդի բացարձակ խոնավությունը 15 գ/մ³ է: Օդը հագեցնելու համար անհրաժեշտ է 20 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը:**

70 **Հյուսիսային Ամերիկայի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Յուկատան թերակղզին գտնվում է արևադարձային կլիմայական գոտում:
2) Արկտիկական կլիմայական գոտում տեղումները քիչ են՝ 200-250 մմ:
3) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային մերձարևադարձային գոտուց մինչև մերձարկտիկական գոտի:
4) Բարեխառն գոտու ներքին շրջաններում կլիման ծովային է:
5) Լաբրադորյան և Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
6) Գոլֆստրիմ տաք հոսանքը առաջացել է տոռնադոյի պատճառով: